միջոցներ բանեցնելուց յետոյ թեթև կերպով սաստել եմ երկու երեք աշակերտ։ Ուրիշ օրինակներ եղած չեն։ Մարմնական պատիժը առօրեայ երևույթ է մեր հայ տներում, բայց ոչ հ. դպրոցի մէջ, ուր ամենքս միաբան աշխատում ենք միայն բարոյական միջոցներով ազդել, ոքան էլ դժուար լինէր այս եղանակի գործադրութիւնը ըստ մեծի մասին մարմնական պատիժներով մեծացած տղաների վրա։ Ես խոստովանել եմ և կրկին խոստովանում եմ ի սրտէ, որ արածս լաւ բան չէր—վատ էր. բայց երկու անգամ մարդկօրէն թոյլ գտանվելուս համար թող նա ինձ դատէ, որ ինքն մի անմեղ հրեշտակ է և ոչ թէ մի Սիլիւքը։

Նա գրում է, որ հ. դպրոցի մէջ մի վարժապետ աշակերտներից ծեծվել է։ Ոչ մի ժամանակ այսպիսի մի բան, դէթ սրա նմանը պատահած չէ այնտեղ, և ես հրաւիրում եմ Սիլիւքին, որ նա իւրա-պատկան անունով դուրս գայ հաստատելու իր գրածը, եթէ ունի աղնուութիւն։

Պ. Սիլիւքի ասելով, հ. դպրոցի տեսուչը իբր թէ 9 ժամին է գնում իր ոտքը վարժարանի մէջ—դարձեալ ստութիւն, որովհետև դասերը առաջ սկսվում են առաւօտեան 8 ժամին, իսկ ձմեռը 8½-ին և իրաքանչիւր առաւօտ դեռ դասերից առաջ ես ներկայ եմ այնտեղ։ Գուցէ ինքն Սիլիւքը ոչ մի առաւօտ 8 ժամին չէ վերկենում անկողնից, որ կարողանար ստուգել մեր ժամերի ճշտութիւնը, ուրեմն այս կտորում նրան սխալվել ներելի է։ Աշակերտների արձակման գալով, Սիլիւքը գրում է, թէ նրանք 1 ժամին են տուն գնում։ Ցիրաւի, կան 1 ժամին տուն գնացող աշակերտներ. բայց սրանք միայն նախակրթարանի փոքրիկ աշակերտներն են, որոնց համար օրական չորս դասից աւելի կանոնաւոր պարապմունք ոչ մի խելացի մանկավարժ կարող չէ սահմանել։ Իսկ եթէ Սիլիւքը ինքն տեսուչ դառնայ, ազատ է դնել և 14 դաս... Առաջին և երկրորդ դասարանի աշակերտները ունեն օրական հինգ դաս և արձակվում են ուղիղ 2 ժամին կէսօրից յետոյ. դասերը չիմացող աշակերտները մնում են վարժարանի մէջ և աւելի ուշ, և տեսուչը, որ օգնական չունի, ստիպված է լինում այդ աշակերտներին օգնելու համար մինչև երրորդ և չորրորդ ժամը հետերը պարապելու, թէև ամեն առաւօտ արդէն իր առարկաներից երեք չորս դաս տալով և տեսչութիւն անելով իսպառ հոգնած լինէր... Լաւ եղանակին գրեթէ բոլոր աշակերտները գալիս են ճաշից յետոյ խաղալու վարժարանի բակի մէջ և տեսուչը միշտ նրանցից անբաժան է։ Այս բոլորը իբր թէ չը գիտէ պ. Սիլիւքը։

Մեր Սիլիւքը աւարտում է իր յօդուածը բացականչելով, թէ «հ. դպրոցին պէտք է արմատական վերանորոգութիւն։ Աչքերդ բաց, Սիլիւք, վերանորոգութիւնը արդէն կատարվել է սկսեալ այն օրից, երբ մի քանի վարժապետներ հեռացել են վարժարանից։ Այժմ այն տեղ չը կայ ոչ մի վարժապետ, որ թուաբանութիւն դաս տար և ամբողջ երեք տարվայ ընթացքում չորս գործողութիւններն անգամ չանցնէր,—որ մի և նոյն ժամանակ լատիներէն լեզուի դասերն էլ յանձն առնէր՝ առանց մի բառ գիտենալու այս լեզուից, իսկ ֆրանսերէն դեռ կարդալ անգամ չիմացող համբակներին հայերէն տառերով ամբողջ ֆրանսերէն ոտանաւորներ բերան սերտել հրամայէր և թուրթակի պէս ասել տար միամիտ ծնողներին չլացնելու համար,—և ամեն մի աշակերտի առաջուց ասէր, թէ ինչ պիտի հարցանէ նրանց քննութեան ժամանակ,—որ մի տարվայ ընթացքում չորս հինգ անգամ փոխել տար աշակերտներին մի և նոյն առարկայի դասագրքերը,—որ աշակերտներին իր տնային պէտքերի համար բաղար և խառնութիւններ ղրկէր, ասես թէ իր սպասաւորները լինէին,—որ դասատուութեան փոխանակ աշակերտներին ասէր, թէ որի մայրը ինչ վարք ունի, ով նրանցից հարազատ դաւակ է և ով ապօրինի,—որ դասարանի մէջ աշակերտներին իսպառ անտես թողած, դաս տալու սահմանված ժամերը ծխախոտը բերանին հանդիստ լրագիր կարդալով անցկացնէր կամ նրանց զուարճալի ոտանաւորներ կարդար,—որ բոլոր աշակերտների և պաշտօնակիցների առջև դպրոցի սրբազան տեսչին ամենավատթար յիշոցներով բարձրաձայն—հայհոյէր, —որ աշակերտներին երգ երգել հրամայէր և ինքն նրանց առջև կոնծաբանութեան գործնական դասերը աւանդէր.... Ես հեռու եմ այն մտքից, որ իբր թէ հ. դպրոցը բոլորովին թերութիւն չունի. մենք միշտ պատրաստ ենք կատարել ամեն մի բարի խորհուրդ նրան առաւել բարւոքելու համար. բայց Սիլիւքը «արմատական վերանորոգութիւն» ասելով, ինքն էլ չէ հասկանում իր ասածը։

Պ. Սիլիւքի զրպարտութիւններից յետոյ ինձ, իբրև տեսչի, անպատշաճ է, ջատագով հանդիսանալ մեր հ. դպրոցին, այնու ամենայնիւ կասեմ, և եթէ հարկ լինի պաշտօնական վկայութիւններով կը հաստատեմ, որ սրա մէջ թագաւորող ոգին, նրա ուսման ընթացքը և ներքին բարեկարգութիւնը արժանի են համակրութեան և ոչ թէ վատաբանութեան, և թէ մենք անում ենք ինչ որ միայն մարդկօրէն հնար է անել մեր նեղ հանգամանքների մէջ։ Ունենք մի նախակրթարան երեք բաժանմունքներով և երկու դասարան։ Անցեալ տարի մեր նախակրթարանից ելած աշակերտները արքունի գիմնազիայի առաջին դասարանը մտան, իսկ երկրորդ դասարանից ելնողները, օրինակ, պ. Քեչէճեանի որդին, արքունի բէալական դպրոցի երրորդ դասարանը մտնելու քննութիւն տուին յաջողութեամբ։ Միւսները իբրև բարեկիրթ և ամեն աղնիւ գործի պիտանի երիտասարդներ իրանց ծնողների խանութը մտան, որոնց և միշտ պատիւ պիտի բերեն։ Հ. դպրոցի դասատուութիւնը կատարվում է բէալական վարժարանների զուգընթաց նախագծով։ Երանի թէ մենք կարող լինէինք բանալ և յաջորդ դասարանները. եթէ նրանք դեռ չեն բացվել, բուն պատճառը հ. դպրոցից դուրս պէտք է որոնել։ Բայց այժմ թէ մեր Վեհափառ Հայրապետը և թէ արդոյ հոգաբարձուները փութաջան հետևում են, որ մեր քաղաքի ազգային դաստիարակութեան այս միակ ապաստանը կարող լինի աւելի ընդարձակելու իր ազգօգուտ գործունէութիւնը, ուշ չը դարձնելով Սիլիւքների հայհոյանքներին և յոյս առ Աստուած—մեր ամենքիս ջերմ փափագը վաղ թէ ուշ կը կատարվի։

Եթէ պ. Սիլիւքը ուրանում է և չէ տեսնում այդ ազգօգուտ գործունէութիւնը,—թող կայր մնայ,—մեզ փոյթ չէ։ Ես բերում եմ այստեղ մի գրաւոր ճառի խօսքերը որի օրինակը ձեռքումս է, և որի հեղինակը հ. դպրոցի հակառակորդների դէմ խօսելով հարցնում էր. «Ինչու է, որ ամենայն հնարներով հ. դպրոցի գոյութեանը մահու վտանգ սպառնացող մարդիկ կան։ Ինչու օձը կը խայթէ, ինչու գայլը կը յափշտակէ, ինչու կրակը կայրէ, ինչու... Ինչոր համար, որ նոցա բնութիւնն է այդ, որ ամեն մի լաւ բան, ամեն աղնիւ գործ ամեն անձնուէր մարդ, ամեն բարի անուն կոծանէ, ջնջէ, թաւալէ, սեղմէ, հողի հետ հաւասար անէ և ինքը, ինչպէս բուհու, աւերակներուն մէջ բնակի, աւերակների վրա թագաւորէ»։—Ո՞վ կարող էր Սիլիւքի պատկերն աւելի ճիշդ նկարագրել, քան թէ այդ իրան յայտնի ճառը....—Այս կը լինի իմ առաջին և վերջին խօսքը պ. Սիլիւքին. մինչև որ նա իւրապատկան անունով հրապարակ չը դուրս գայ։ Այն ժամանակ ես աւելի կը պատասխանեմ։

Փ. Վարդանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Обзоръ» լրագիրը լսել է որ Նորին Բարձրութիւն Կովկասեան փոխարքան ուղևորվելու էդէպի Ս. Պետերուրգ փետրվարի 9-ին, որտեղ ներկայ գտնվելու է թագաւոր կայսրի 25 տարվայ թագաւորութեան տարեդարձին։

—

«Обзоръ» լրագիրը հաղորդում է որ իշխան Միրսկու տեղ Կովկասեան փոխարքայի օգնականի պաշտօնի մէջ նշանակված իշխան Լ. Ի. Մելիքով հասաւ Թիֆլիս և մտաւ արդէն իր նոր պաշտօնի մէջ։

—

Մենք ստացանք ԹԻՖԼԻՍՈՒՄ յօգուտ Վանի սովատանջների ստորագրութեամբ հաւաքած 122 ր. 81 կոպ., որ մեզ խնդրում եմ հասցնել «Արարատեան» ընկերութեանը։ Թող ընկերութիւնը կարգադրէ ինչպէս կամենում է և գործ դնէ ինչ ճանապարհով ուզում է այդ գումարը յօգուտ Վանի սովատանջների։

—

Մենք ստացանք ՇՈՒՇՈՒՅ, պ. Իսան Աւետիքեան Զարապեանից 25 ռուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան։

—

Մի պարոն, Հէնրիխ Բլօկկ անունով, խնդրում է մեզ տպել որ նա եկել է Թիֆլիս իր կնոջ հետ, և երկուսն էլ դասեր են տալիս գեղագրութեան։ Երկու ամուսիններն էլ ունեն բազմաթիւ վկայականներ Ռուսաստանի զանազան ընկերութիւններից, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութենից և ուսումնական վարչութիւններից։ Այդ վկայականներից մենք տեղեկանում ենք որ Բլօկկ ամուսինների գեղագրութեան դասատուութեան մեթոդը ամենադիւրին մի մեթոդ է, որի միջոցով մի քանի դասերի ընթացքում կարելի է ուղղել ամենավատ ձեռքը։ Վկայականներից մինը ստորագրված է գեներալ Պետերսի, Նորին Բարձրութիւն փոխարքայի որդիների դաստիարակի անունով, որովհետև տիկին Բլօկկ Նորին Բարձրութեան որդիներին գեղագրութեան դասեր է տուել։

—

ԵՐԵՒԱՆԻՑ յունվարի 29-ից հեռագրում են մեզ հետևեալը։ «Երէկ, յունվարի 28-ին այստեղի թատրոնական մի կուսակցութիւն տուեց բարեգործական նպատակով հայերէն մի ներկայացումն, խաղացին «Շուշանիկ» ողբերգութիւնը, հեղինակութիւն Կարինեանցի և «Բռնի ամուսնութիւն», Մոլիէրի։ Հիանալի և անմոռանալի էին օրիորդներ Ալիխանեան և Խուդաբաչեան։ Հանդիսականների մեծ մասը կանայք և օրիորդներն էին։ Երևանի հասարակութիւնը մեծ համակրութեամբ է վերաբերվում դէպի թատրոնական գործը, որ նրանց մեծ պատիւ է բերում։»

—

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՅ, որ տեղացի մի քանի թուրք և հայ ունևոր պարոններ իրանց մէջ 600 ր. էին հաւաքել և գնացել էին Գանձակ Զավչավաձէին ճանապարհ գցելու։ Գանձակում նոքա մի խնջոյք էին տուել։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ նորերումս այնտեղ գիշեր ժամանակ այրվել են հարուստ Լալայեանցներին պատկանող 3 խանութներ, որոնք վարձով էին տուած մի հայի և մի թուրքի։ Վնասը հասնում է 2500 ռուբլու։ Խանութատէրերը չը գիտէին իրանց ապրանքը կրակից ազատէին, թէ գողերից։ Հարևան խանութատէրերը նոյնպէս մեծապես տուժեցան, որովհետև ստիպված էին իրանց ապրանքները խանութից դուրս ցրիվ մէջ ածել։ Բագուի մէջ գողութիւններ յաճախ են պատահում։

—

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՅ. «Տեղական թուրքերը Բագուից ստացած իրանց ալիւրը բոլորը բաժանեցին աղքատներին։ Օրերումս նրանք նոյն նպատակով գնել են պ. Շեխանից 500 պուդ ցորեն։ Հայերի համար նոյնպէս եկել է ալիւր Բագուից, բայց նրա քաղորդն անգամ չէ ծախված։ Ասում են ալիւրի մէջ դառնահամ էլ է պատահում։ Ալիւրի պուդը այժմ ծախվում է 2 ր. 20 կ.—մինչև 2 ր. 40 կ., իսկ թխած հացի ֆունտը արժէ 5—6 կ.։ Քաղաքիս առաջին հարուստ Բարայ Բէգլարեանը ասել է, որ ալիւրը այնպէս պէտք է ծախվի, որ գոնեա հաւաքած դրամագլուխը առանց տոկոսի յետ ստացվի։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Հարուստ Գ. Լալայեանցը նուիրել է իր հաշաղաքացիներին 100 ջուալ ալիւր, որոնցից 15 ջուալ մալականներին և ռուսներին, 10 ջուալ լիւտերական հայերին, մնացածը լուսաւորչական հայերին։ Զարմանալի է թէ ինչի լիւտերական և լուսաւորչական հայերին ջոկում են միմեանցից։»

—

Այսօր յունվարի 31-ին պ. Սլավեանսկի իր խօսքով տալու է Արծրունու թատրոնում մի մեծ կոնցերտ։ Գները աւելի էժան են, որպէս զի

Ասենքը համաձայնեցին և վճռեցին տալ «Պէպօ»։

—Ես թէև համաձայն չեմ, ասաց Կօշկանը, այդպիսի կատակերգութիւններ խանգարում են ճաշակը. բայց «degustibus disputandum non est» և ես լռում եմ։

—Ափսոս, որ միշտ այդպէս ես անում, չը համբերեց Խաչատրեանը։ Հարցը վերջացրած, ընտրեցին դերասաններ, ծախսարար, որ հոգայ ամենայն նիւթական պիտոյքները և վճռեցին տոմսակները։ Ցետոյ սկսեցին մի առ մի ցրուել, նամանաւանդ որ գործով պարապուած լինելով, նոքա մոռացել էին իւրեանց ստամոքսի մասին, որը այժմ չարաչար կերպիւ յայտնեց իւր պահանջը։

—Ցտայք, գնանք ինձ մօտ, դարձաւ մի քանիսներին Աշոտը, Թիֆլիսից նոր լրագիրներ եմ ստացել. կը կարդանք և մի փոքր կը խօսենք։

—Ձենք կարող, ասաց Տիգրանը, այսօր հրաւիրուած ենք Մելքոնի մօտ, նորա ծննդեան օրն է, որը նա կամենում է տօնել մի թեթև քէֆով։ Դու ևս հրաւիրուած ես, գնանք։

—Ինչ գամ, ես գիտեմ, թէ ինչպէս էք ժամանակը անցկացնելու։

—Ինչ և լինի։ Ինչպէս թանձրացած օդը մաքրելու համար հարկաւոր է լաւ մրրիկ, նոյնպէս ուսանողին իւր մտական ոյժերը զովացնելու համար ժամանակ առ ժամանակ հարկաւոր են այսպիսի զբաղմունքներ։

Այս իմ կարծիքն է։

—Լաւ, այդ մասին շատ ենք վիճել և այժմ խօսել աւելորդ է։

Այս անգամ ես ևս կը հետևեմ ձեր օրինակին գնանք։

Ամենքը հաղնուեցին և դուրս եկան։ Եղանակը բաւական ցուրտ էր, այս պատճառաւ կոլոլուած իւրեանց պլեդներում նոքա անխօս շարունակում էին իւրեանց ճանապարհը։ Ցանկարծ Գէորգեանը թողեց մի հայհոյանք և դառնալով իւր ընկերներին ասաց։

—Լսեցիք, ահա հայի աղնիւ յատկութիւններից մէկը—նա ուրանում է իւր ազգը և այն էլ ում համար։

Արդարև, պատահմամբ մեր ուսանողների առաջև գնում էր մի կնոջ հետ մի հայ և նորան համոզելու համար հաւատացնում էր թէ նա հայ չէ, այլ յոյն։

—Ինչ ես պահանջում այդ իշի գլխից, ասաց Աշոտը, երբ մեր լուսաւորուած փանոսը, որ անցեալ տարի աւարտեց և իսկոյն պակուեց օտարազգուհու հետ, ամենայն տեղ հաւատացնում էր, թէ՝ նա վրացի է, չը նայելով իւր ազգանուն տէր մասնիկին։

Մեզ հարկաւոր չեն այդ ուրացողները, նորա ազգի մարմնի վրա՝ աւելորդ միս են և եթէ ինքն ըստ ինքեան չեն վեր թափում, ինչպէս փանոսը, հարկաւոր է մինչև անգամ նոցա կտրել։

—Եթէ կտրես, հաղիւ թէ առողջ տեղ մնայ, նկատեց Գէորգեանը։

Այսպէս խօսելով փոքրիկ խումբը հասաւ Մելքոնի սենեակը։

—Բարով հաղար բարի էք եկել, ընդդիմեց նոցա Մելքոնը և հրաւիրեց սեղանի մօտ, ուր արդէն կարգով շարած էին դինու և գարեջրի շշերը, ուտելեղէններ և մի քանի տեսակ մրգեղէն։

Ամենքը լցրին իւրեանց բաժակները և ցանկալով երկար կեանք խմեցին տան տիրոջ կենացը։ Առաջի բաժակից յետ, ի հարկէ, դատարկեցին և շատ ուրիշները, որը ներկայ եղողների կենացը, որը մի այլ պատճառաւ. մի խօսքով—սկսվեց կոնծաբանութիւնը։ Դլխները սկսեց տաքանալ, լեզուները բացուեց և ամեն մէկը սկսեց ուրախանալ, ինչպէս և գիտէր։ Որը ծիծաղաշարժ անեկդոտներ էր պատմում, որը մի բարձր նիւթի վրա դատողութիւն էր տալիս և որը սկսում էր ճառ ասել և դեռ չը վերջացրած, հարկադրում էին մի բաժակ դատարկել և լռել։

Ցետոյ սկսեցին երգել։ Երգեցին «Մեր հայրենիք», «Ինձ համար չէ», «Միծեռնակ», շատ ուսանողական երգեր և մինչև անգամ Բեթհովենի երգերից։

Երբ բաւական ճեղքեցին կոկորդները, մէկը առաջարկեց ասիական պարեր պարզալ։ Իսկոյն յետ քաշեցին սեղանները, հանեցին սիւրտուկները, Մելքոնը սկսեց ածել զանազան եղանակներ, մնացողները պարում էին սկզբում մէկ մէկ «լակի» և ուրիշ պարեր, վերջումը վճռեցին ասիական «ճալլին» ևս պարզալ, ամենքը միատեղ կուռ կռի տուին, Աշոտը թաչկինակը առաւ ձեռը և դառաւ եալլիքաշի։ սկսեցին թռչկոտալ սենեակի չորս բոլորը, մի կողմից երգելով, մի կողմից «հօպլա-հօ» բռնալով։ Ցատակը թնդաց, առաստաղը որոտաց, սեղանները իւրեանց վրա դրած չիչերով և բաժակներով սկսեցին անտանելի ձայներ հանել։ Հարևանները սաստիկ անհանգիստ եղան և ուղարկեցին ծառային խնդրել փոքր ինչ հանգիստ լինել։

—Ինչ, սորանից էլ հանգիստ. գուցեց խաչատրեանը, մօտենալով ծառային, գարեջրով լիքը բաժակը ձեռին։

Վերջինը խոհեմութեամբ փակեց դուռը և հեռացաւ, եթէ ոչ, պիտի մրրտուէր գարեջրով։

Վերջապէս, երբ ամենքի երեսից քրտինքը ընկսեց վազել անձրևի պէս, դադարեցին պարզալուց և նստոտեցին իւրեանց տեղերը։

Այժմ աւելի հանգիստ էին, որովհետև ամենքը բաւական յոգնեցան, շատերին արդէն յաղթում էր թմրութիւնը և մինչև անգամ մի երկուսը քնեցին նստած տեղում։

Բայց մի խումբ չորս, հինգ հոգուց բաղկացած դեռ բաւական զուարթ նստած է անկիւնում և խօսում է, կամ լաւ ևս ասել ոչ թէ խօսում են, այլ յօրանջելով նայում մէկ մէկու վրա և ժամանակ առ ժամանակ զանազան նկատողութիւններ անում։

—Օհ, բաւական յոգնեցայ, նկատում է դոյներից մէկը, այժմ հարկաւոր է մի հանգիստ գործով պարապել։

—Հա, հա, այսպէս նստել տխուր է. հաստատում է միւսը։

Դարձեալ յօրանջում են և մէկ մէկու երեսի նայում։ Առաջարկում են մի բաժակ խմել—իրմում են։

կոնցէրտը աւելի մատչելի լինի բազմութեանը։ Կոնցէրտում կը մասնակցի պ. Զօտիկով և կը ներկայացվեն տեսարաններ «Аскольдова могила» ռուս օպէրայից։ Սկիզբը 8 ժամին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԻՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Բէյլսարատը համաձայնվեց գառավարութեան պահանջած զօրաժողովի սովորական թիւի հետ, միայն Բէյլսարատի կարգադրութեամբ՝ զօրաժողովը փոխանակ մայիսի, մարտին պէտք է լինի, որովհետև մայիսի զօրաժողովը լինելով ժողովրդի աշխատանքի ժամանակ, վատ տպաւորութիւն է գործում ազգաբնակութիւնների վրա։

«Pester Lloyd» լրագիրը խօսելով Գիւրնէրի Բէյլսարատում խօսած ճառի մասին, ասում է, որ հռետորն այն պատճառով է պնդում, որ Ռուսաստանի հետ դաշն կապեն, (թէև նա էլ շատ լաւ է հասկանում, որ այս տեսակ դաշնակցութիւնը կարող է վնասել Աւստրիայի Գերմանիայի հետ ունեցած յարաբերութիւններին) որովհետև գահի մօտ այնպիսի մարդիկ են գտնվում, որոնք աշխատում են իրագործել նրա խօսքերը։

Զինուորական կանոնադրութեան հարցը յօգուտ կառավարութեան վերջացնելուց յետոյ, բէյլսարատում հանդէս դուրս եկան տնտեսական հարցեր։ Աւստրիային վաղուց հարկաւոր էին այդ հարցերը, որովհետև դրանք Աւստրիայի ամենաթոյլ կողմերն են կազմում։ Հարևան պետութիւնների հետ կապած նրա առևտրական դաշնադրութիւնները չափից դուրս անձեռնտու են։ Ժողովրդի տնտեսական դրութիւնն ու պետական ֆինանսների ճնշածութիւն այն տեղն է հասել, որ, եթէ բանակի ծախսը փոքր ինչ էլ աւելացնեն—ինչպէս այդ ցանկանում է կառավարութիւնը—, այն ժամանակ դժուար թէ ժողովուրդը կարողանայ դիմանալ այդ ծանրութեանը։

Աւստրիայի տնտեսական հարցերից ամենագլխաւորը և ուշադրութեան ամենարժանաւորը, անշուշտ, այն մաքսային և երկաթուղիների դաշն է, որ աւստրիական կառավարութիւնը մտադիր է կապել Սերբիայի հետ։ Այս դաշնադրութեան մասին Բերլինի դաշնադրութենից սկսած՝ շարունակ վիճաբանութիւններ են եղել, և տեղական մամուլը սրա վերաբերութեամբ այնքան խօսել է, որ այժմ էլ աւելորդ է համարում ձանձրացնել ընթերցող հասարակութեանը։ Բարօն Հայմերլէ ստացաւ այս հարցը իբրև ժառանգութիւն իր հռչակաւոր նախորդից, բայց այդ նա ընտացաւ իբրև մի վճռված վերջացած հարց։ Դժբաղդաբար էլ բէյլսարատի ներկայ վիճաբանութիւնները ցոյց են տալի, որ դեռ մինչև այսօր էլ այդ հարցը հիմնաւորապէս վճռված չէ և չը նայելով, որ Բերլինի վիճաժողովի ժամանակ, կոմս Անդրաշիի կիսապաշտօնական թերթերը սաստիկ զովասանքներով էին խօսում այն ահագին ծառայութիւնների մասին, որով կոմսը յաջողացրեց Բիսմարքի հետ կապել դաշնագիր, այնու ամենայնիւ, ներկայ ժողովը ստիպված է գործը սկզբից սկսել։ Ներկայ բոլոր վիճաբանութիւնները պարզ կերպով ցոյց են տալի, որ սերբիական դաշնագրում, ինչպէս և Անդրաշիի կազմած բոլոր գործերում բացարձակապէս ոչինչ չը կայ որոշված, որովհետև ներկայ քննութիւնների ժամանակ, գրեթէ բոլոր կէտերում վիճաբանութիւններ են առաջանում։ Այս վիճաբանութիւններն ու անհամաձայնութիւնները սաստիկ զայրացնում են տեղական առևտրական և արհեստաւոր դասակարգերին։ Այս տհաճութիւնների ձայնը վերջին օրերս արձագանք գտաւ բէյլսարատի պատգամաւորների մէջ, մինչև անգամ թշնամական յարաբերութիւններ սկսվեցան։

Գերմանական հռետորներն իրանց սովորութեամբ Սերբիայի անհամաձայնութիւնները վերաբերում են պանսլավականութեան մեքենայազործութիւններին, և սաստիկ նախատինքներ են թափում փոքրիկ իշխանութեան գլխին, մեղադրելով, որ նա ապերախտ է գտնվում դէպի Աւստրո-Ունգարիան, որ նրա անկախութեան միակ պատճառն եղաւ։

Գերմանական հռետոր դոկտոր Նտուրմայի անվայել յարձակմունքների դէմ չը համբերից չեխական ներկայացուցիչ պ. Բիգեր և սկսեց սաստիկ կերպով պաշտպանել հարևան փոքրիկ իշխանութիւնը։ Նա իր եռանդուն ճառի մէջ, պաշտպանելով տկարին, և խօսելով արդարութեան անունով, ասաց, որ բնաւ Աւստրիան չէ, որ Սերբիային ազատութիւն ու անկախութիւն շնորհեց, այլ ընդհակառակը ինքը Սերբիան վաստակեց իր փրկութիւնը իր որդոց երկարամեայ, դիւցազնական ու փառաւոր կռիւներով։ և եթէ գերմանացիք այժմ յարձակվում են այդ իշխանութեան վրա, դրա միակ պատճառն այն է, որ նա սլավօնական է, և դա միայն բաւական է որ նա ատելի լինի։

Պ. Բիգերից յետոյ խօսեց լեհացոց պարլամենտական կլուբի նախագահ պ. Դրօխօյսկի։ Նա էլ գրեթէ մի և նոյն միտքը պաշտպանեց, ինչպէս որ նրա չէխական եղբայրակիցը, միայն այս վերջինս փոքր ինչ աւելի մեղմ կերպով պաշտպանեց նրան, բայց և այնպէս այդ խօսքերը մի լեհացի ներկայացուցչից ահագին տպաւորութիւն գործեց, և մեծ աղմուկ գցեց պարլամենտի մէջ, որովհետև լեհացին համարվում է շատ թէ քիչ սլավօնականութեան թշնամի տարր, հետևաբար և մի լեհացի նախագահի բերանից երբէք չէին սպասում մի այդպիսի ջերմ պաշտպանութիւն։

Իսկ ինչ կը վերաբերի Աւստրօ-սէրբիական մաքսային դաշնադրութեանը, թերևս քաղաքական զանազան հանգամանքներ արդեօք լինեն այդ դաշնադրութեան կապվելուն, բայց և այնպէս աւելի հաւանական է, որ այդ դաշնադրութիւնը կարճ միջոցում կը կայանայ, որովհետև Սերբիայի տնտեսական դրութիւնը բոլորովին կախված է Աւստրիայից, և այս վերջինս ստիպված է կամայ-ակամայ զիջանել։

Սերբիան դեռ էլի կարող է Բոլգարիայի և Ռումինիայի վրայով օտար երկիրներից ապրանք ստանալ, թէպէտ և նոյն իսկ այդ երկիրները էլ նոյնպէս լցված են աւստրիական ապրանքներով, հետևաբար և հարկ կը լինէր Սերբիային երկրորդ ձեռքից գնելու մի և նոյն ապրանքները, ուրեմն և աւելի թանգ գներով։ Բայց ինչ կը վերաբերի ապրանքի արտահանութեանը, դա ամբողջապէս կախված է միակ Աւստրիայից։ Սերբիայի արտահանութեան միակ առարկաներն են եզան կաշիները և խոզերը։ Ո՞ւր տանել նրանց ծախելու. Ռումինիան և Բոլգարիան պէտք չունեն դրանց, որովհետև առանց այդ էլ նրանք շատ հարուստ են այդ բարիներով, ուրեմն միակ և վերջին ելք դրանց ծախելու, մնում է միայն Աւստրիան։

Այսպիսի դէպքում Աւստրիային բաւական է կրկնապատիկ բարձրացնել խոզերի և կաշուի վրա դրված մաքսը, որը նրան ոչ ոք չէ կարող խանգարել, և այսպէսով նա կարող է կատարելապէս սպանել Սերբիային։ Այսպիսի դէպքում Սերբիային մնում է կամայ-ակամայ համաձայնվել, եթէ մինչև անգամ նրա այդ համաձայնութիւնը ստորութիւն բերէր նրա քաղաքական պատուին։

—Արդէն բաւական ուշ է, նկատում է դարձեալ մէկը նոյն խմբից, հանելով իւր ժամացոյցը և չը նայելով նորա վրա։

Միւսները անհամբեր բարձրանում են տեղից և դարձեալ նստում։

Երևում է, որ ցանկանում են մի բան ասել, բայց ոչ ոք չէ կամենում առաջինը սկսել։

—Ինչ էք կեղծաւորութիւն անում, ծիծաղելով ասում է վերջապէս Գէորգեանը, որ մինչև այժմ լուռ նայում էր նրանց վրա և քթի տակին ժըպտում։ Ասացէք ուղղակի, թէ թուղթ էք կամենում խաղալ։

—Դու չես ցանկանում, ինչ է։

—Ինչու չէ։

—Ինչու ապա մինչև այժմ ոչինչ չէիր խօսում։

—Ես սպասում էի, թէ դուք ինչ կանէք և վերջապէս խղճացի ձեզ վրա, տեսնելով ձեր յուսահատ և անմխիթար երեսները։

—Դէ լաւ, յայտնի է էլի մեր բնութիւնը. ըսկսենք, էլ ինչու ենք կորցնում ոսկէ ժամանակը։

—Սկսենք, ուրախացած կրկնեցին միւսները։

Ցանաէրը լաւ գիտէր իւր ընկերների սովորութիւնը և արդէն հոգացել էր ամեն հարկաւոր բան։ Ցառաջ բերին կանաչ մահուդով ծածկած սեղանը, երկու մամ, կաւիճներ և թղթեր։ Ամենքի սիրտը բացուեց, երեսներին ծիծաղ եկաւ և ձեռները տրորելով բազմեցին սեղանի չորս բոլորը և սկսեցին ս տ ո ւ կ ո ւ լ կ ա թղթախաղը։

Լաւ պսիխոլոգ պիտի լինի, որ նկարագրի այս հետաքրքիր տեսարանը, այդ մեր ոյժից վեր է։ Այստեղ ամենայն բոպէ փոխվում են կերպարանքները, լսվում են ուրախութեան ձայներ և բարկացոտ մռնչիւններ. նա, որ մի բոպէ յառաջ ուրախ ծիծաղում էր, այժմ այնպիսի մռայլ դէմք ունի, որ կարծես թէ միտք ունի իրան սպանել։ Մէկը մի առ մի և կամաց կամաց բարձրացնում է սեղանի վրայից թղթերը և յանկարծ ուրախ կուրծքին է կպցնում, մյուսը ընդհակառակ յուսահատ դէն է ձգում թղթերը։

—Այս անպիտան քօփակի (թագաւորի) վրա յուսալ չէ կարելի, զայրացած ասում է մի ուրիշը, որ այդ բոպէին բ ե մ ի զ է գնում։

Մի խօսքով հոգեկան շարժումները փոխարկվում են և զանազանվում այնպէս արագ, որ նրանց ըմբռնել չէ՞ կարելի։

Տեսարանը նոյնն է, ինչ և ուրիշ թուղթ խաղացողների շրջանում։ Ուրիշները վաղուց արդէն ցրուել էին, իսկ սոքա շարունակում էին պատերազմել։ Վերջապէս կէս գիշերից շատ ուշ, երբ անքնութիւնից արիւնը կոխեց ամենքի աչքը, զըլխները սկսեց տրաքել և այնքան թուլացան, որ հազիւ կարող էին ուղիղ նստել տեղում, սրանք ևս վերջացրին խաղը և սկսեցին ցրուել։ Մի երկուսը, որոնք շատ հեռի էին ընակվում, մնացին Մելքոնի մօտ գիշերելու։

Տիգրանը ևս, որ նմանապէս թուղթ էր խաղում, կիսահարբած և բոլորովին թուլացած, դուրս եկաւ, որ գնայ իւր տունը։ Փողոցում նրա գլուխը սկսեց պտոյտ գալ և նա հարկադրուեց մի քանի բոպէ լապտերի սիւնից բռնած մնալ, որ վայր չընկնի։ Մարդ բոլորովին չէր երևում և կառք ևս անկարելի էր գտնել։ Ճարահատեալ պատից պատ դիպչելով, սիւներից բռնելով, նա սկսեց յառաջ ընթանալ։

Մի փողոցի անկիւնում յանկարծ նրան կանգնեցրեց մի անծանօթ մարդ և սկսեց փող պահանջել, ասելով՝ որ երեք օր է ոչինչ չէ կերել։ Տիգրանի մտքով անցկացաւ, որ դա կարող է գող լինել և նա սկսեց իւր բոլոր ոյժով—«կարաուլ» գոռալ։ Կարաուլը, ի հարկէ, չերևաց, որովհետև այդ ազնիւ ասպետները փոխանակ բնակիչների ապահովութեան վրա հսկել, նախադասում են անոյշ քնելը. բայց Տիգրանի բաղդից գիշերապահ դռնապաններից մէկը լսեց նրա ձայնը և օգնութեան հասաւ։ Գողը, այդ տեսնելով, անհետացաւ, նախապէս Տիգրանի վզակոթին մի բռունցք հասցնելով, որից նա փռուեց գետնի վրա։ Դռնապանը նրան բարձրացրուց և իմանալով նրա տան հասցէն, կռնից բռնած տեղ հասցրեց, ստանալով մի փոքրիկ դուամար իւր ծառայութեան համար։

Յուրտ փողոցից ներս մտնելով, Տիգրանի գլուխը աւելի չփոթուեց։

Այդ բոպէին, ո գիտէ ինչ հարկաւորութիւնից, տան տիկնոջ աղջիկը գիշերուայ չորերով անցնում էր սրահով դէպի իւր սենեակը։ Տիգրանը տեսնելով նրան, ինքն չը հասկանալով թէ ինչ է անում, յառաջ վազեց իւր անհաստատ քայլերով և գրկեց նորան։ Օրիորդը սկզբում զարմացած, տեսնելով նրա դրութիւնը, դուրս պրծաւ նրա գրկից և մտաւ իւր սենեակը։ Տիգրանը, որպէս թէ ոչինչ չէ պատահել, շարունակեց ճանապարհը, հասաւ իւր սենեակը և առանց չորերը հանել, ընկաւ մահճակալի վրա և իսկոյն քնեց։ Միւս օրը նա զարթեց ճաշից շատ ուշ, խոր ընկած աչքերով և գունաթափ երեսով, և երբ պահանջեց սամօվար, ծառան ասաց՝ որ հրամայած է ոչինչ չը տալ նրան։

Զարմանալով այս անտեղի հրամանի վրա, Տիգրանը գնաց տանտիկնոջ մօտ իմանալ պատճառը։

—Եւ դուք դեռ պատճառ էք հարցանում, յարձակուեց նրա վրա կատաղի գերմանուհին։ Այսօր և իսկ թողէք իմ տունս։

Տեսնելով որ կատաղած կնոջից ոչինչ չէ կարելի իմանալ և զգալով, որ հարբած ժամանակը մի անքաղաքավարի բան կը լինի բռնած, նա աւելորդ համարեց հարցուփորձը, նոյն օրը նոր սենեակ բռնեց և քաշուեց այնտեղ։

Օրիորդը, որ շատ հաւանում էր Տիգրանի թուխ աչքերին և, մեր մէջ ասել, բոլորովին անբաւական չէր գիշերուայ անցքով, շատ տխրեց այս մասին։ Նա չէր կարծում, որ գործը այս աստիճանի կը հասնի, բայց արդէն ուշ էր։ Իսկ խեղճ Տիգրանը մինչև վերջը չիմացաւ, թէ ինչ էր պատճառը նրա յանկարծակի արտաքսուելուն։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հաղորդում են, որ երկու անգլիական գնդապետներ զօրքի գլխաւոր են նշանակված Փոքր-Ասիայում, Նօրտանը—Քուրդիստանում և Կօպպ—Էրզրումում։

—Նիւ-Եօրկից հաղորդում են, որ Մակ-Կլօսկի կարդինալի կարգադրութեամբ, կիրակի, փետրվարի 1-ին, նրա թեմի բոլոր եկեղեցիներում ժողովարարութիւն կը լինի յօգուտ իրլանդացի թշուառ բնակիչների։

—Լրագիրներում կարդում ենք, որ Բուֆալօում, Միացեալ-Նահանգներում, յունվարի 14 (26)-ին Պարնել յայտնեց, որ իրլանդացիները իրաւունք ունեն ինքնուրոյն ժողովուրդ լինելու։ Եթէ այս նպատակին հասնելը հնարաւոր է, այն ժամանակ իրլանդացիք պարտաւոր են չը խնայել իրանց արիւնը հայրենիքը պաշտպանելու համար։ Պարնէլ չը գիտէ, թէ հնարաւոր է այդ հարցը խաղաղութեամբ վերջացնել, բայց եթէ անհնարին կը լինի, այն ժամանակ հողատէրերը պարտաւոր են թողնել երկիրը։

—Ժիւլ-Ֆավրի և Լէօն դէ-Լավէրնի մահուան պատճառով սենատօրական ազատ տեղերը լինի հասան։ Երկու ցմահ սենատօրների՝ Մօնտալիվէի և Լավէրնի տեղ դիտաւորութիւն կայ նոր սենատօրներ ընտրել յունվարի 29-ին։ Փարիզի լրագիրները յունվարի 25-ից հաղորդում են, որ Լավէրնի տեղ հասարակապետականները սենատօրական տեղ են առաջարկում յայտնի պուբլիցիստ Ջօն Լէմուանին։

—Փարիզի «Voltaire» լրագիրը հաղորդում է յունվարի 26-ից, որ ժէնէվում գտնված ֆրանսիական կոմունարները դիտաւորութիւն ունեն հաւաքվել վճռելու համար այն հարցը, թէ արդեօք պէտք չէ իրանց յանձնել ֆրանսիական դատաստանական իշխանութիւններին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լօնդոնից հաղորդում են լրագիրներին, յունվարի 30-ից, որ լ օ ր դ Բ ի կ օ ն ֆ ի լ դ ը հիւանդացել է թեթև պաղարայով և սենեակից չէ դուրս գալի։

***

Գ ե ն ե ր ա լ Գ ա ր ի բ ա լ դ ի ն նամակ ուղարկեց Հումբերտ թագաւորին, որի մէջ յայտնում է նորին մեծութեան իր ամենանալու մասին։ Նա շնորհակալութիւն է յայտնում թագաւորին այն բանի համար, որ Իտալիայում գործ դրվող օրէնքները հնարաւորութիւն տուեցին նրան կատարել այս պարտքը։ Թագաւորը նրան մէկ սիրալիր հեռագրով պատասխանեց։ Աւելորդ չէ այստեղ յիշել, որ Գարիբալդին իր կեանքում մի քանի անգամ պակվել և բաժանվել է իր կանանցից։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ